

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԻՎ 3 ՆՈՒՀ» ՀՈԱԿ-Ի ԵՐԿՈՒ ԴԱՍՏԻԱՐԱԿՆԵՐԻ ԵՎ ՀՈԱԿ-ԻՆ ԿԻՑ ԳՈՐԾՈՂ ՏՈՐՈՒՆԻՔ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԿԱՐՃԱԺԱՄԿԵՏ ԽՄԲԻ ԴԱՍՏԻԱՐԱԿԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ

ՀՀ Սյունիքի մարզի «Սիսիան համայնքի թիվ 3 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ՝ նախադպրոցական ուսումնական հաստատության 2 դաստիարակների՝ 0.625-ական դրույքաչափով և ՀՈԱԿ-ին կից գործող Տորունիք բնակավայրի կարճաժամկետ խմբի դաստիարակի 0.5 դրույքաչափով թափուր պաշտոնների համալրման նպատակով:

Մրցույթին կարող է մասնակցել հաստատության տվյալ թափուր պաշտոնին ՀՀ ԿԳ նախարարի 2011 թվականի սպրիլի 26-ի N416-Ն հրամանով սահմանված տարիֆաորակավորման պահանջներին համապատասխանող անձը (հղում՝ <https://escs.am/am/news/4652>):

Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝

- 1) դիմում (Ձև 1),
- 2) կրթության մասին փաստաթուղթ (դիպլոմ),
- 3) անձը հաստատող փաստաթուղթ,
- 4) աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք կամ աշխատանքային գրքույկ (առկայության դեպքում),
- 5) ինքնակենսագրություն (Ձև 4),
- 6) մեկ լուսանկար՝ 3x4 չափի,
- 7) այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- 8) Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ կամ զինվորական կցագրման վկայական,
- 9) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):

Մրցույթն անց է կացվելու **2023 թվականի հունվարի 10-ին՝ ժամը 10:30-ին**, ք. Սիսիան, Շիրվանզադե 4ա հասցեում: Փաստաթղթերը պետք է ներկայացնել անձամբ՝ անձը հաստատող փաստաթղթով: Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր ժամը 8:30-ից մինչև 17:00-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Փաստաթղթերի ընդունման վերջնաժամկետն է **2022 թվականի դեկտեմբերի 30-ը ժամը 17:00-ը**: Մրցույթն անց է կացվելու 2 փուլով՝ գրավոր և բանավոր:

Հարցաշարին ծանոթանալու համար անցնել հետևյալ հղումով՝ <https://escs.am/am/news/11978>:

Տեղեկությունների համար զանգահարել՝ /0283/23923 հեռախոսահամարով կամ այցելել «Սիսիանի համայնքի թիվ 3 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ (հասցե՝ ք.Սիսիան, Շիրվանզադե 4ա, էլ. փոստ՝ tiv3nuh@sisian.am):